Հաստատված է
«ԷՓՐԻՔՈՈՓ ԿԱՊԻՏԱԼ»
փակ բաժնետիրական ընկերության
Գործադիր տնօրենի կողմից
2026թ. նոյեմբերի 6-ի
թիվ 06/11/2026-3 որոշմամբ

Վաչիկ Գևորգյան

«ԷՓՐԻՔՈՈՓ ԿԱՊԻՏԱԼ»
ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ

ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

ԳՈՐԾԱՐԱՐ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ և ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ

ԵՐԵՎԱՆ 2026

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 «ԷՓՐԻՔՈՌ ԿԱՊԻՏԱԼ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) սույն «Գործարար հարաբերությունների հաստատման և տեղեկատվության փոխանակման» ընթացակարգը (այսուհետ՝ Ընթացակարգ) մշակված է Հայաստանի Հանրապետության արժեթղթերի շուկան կարգավորող օրենսդրության, մասնավորապես՝ «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի, «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի, ՀՀ հարկային օրենսգրքի, դրանց հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերի, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերի և Ընկերության ներքին իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

1.2 Սույն Ընթացակարգը կարգավորում է Ընկերության հետ գործարար հարաբերությունների հաստատման, հաճախորդների նույնականացման և պատշաճ ուսումնասիրության գործընթացը, հաշիվների բացման դիմումների ներկայացման, դիտարկման և պայմանագրերի կնքման կարգը, հաճախորդների դասակարգման գործընթացը և դասակարգման չափանիշների կիրառումը, ներդրումային և ոչ հիմնական ծառայությունների մատուցման շրջանակներում տեղեկատվության տրամադրման, ստացման և փոխանակման կարգը, հաճախորդների հետ հաղորդակցման միջոցների և ընթացակարգերի կիրառումը:

1.3 Սույն Ընթացակարգում օգտագործվող հասկացություններն ունեն հետևյալ նշանակությունները.

1) **Օրենք՝** «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքը

2) **Կանոնակարգ՝** ՀՀ ԿԲ խորհրդի 2014 թվականի հոկտեմբերի 7-ի թիվ 279-Ն որոշմամբ հաստատված «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելման ոլորտում հաշվետվություն տրամադրող անձանց համար սահմանվող նվազագույն պահանջների վերաբերյալ» կանոնակարգը,

3) **Կանոնակարգ 4/07՝** ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի ապրիլի 8-ի թիվ 113-Ն որոշմամբ հաստատված «Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց գործունեության նկատմամբ պահանջները» կանոնակարգ 4/07-ը,

4) **ՓԼ/ԱՖ ընթացակարգ՝** Ընկերության «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի ընթացակարգը»,

5) **Հաճախորդ՝** Ընկերության հետ գործարար հարաբերություն հաստատող կամ այդպիսի հարաբերությունների մեջ գտնվող անձ,

6) **Գործարար հարաբերություն՝** Ընկերության կողմից հաճախորդին մատուցվող պարբերական ծառայություններն են, որոնք չեն սահմանափակվում մեկ կամ մի քանի միանգամյա գործարքներով: Գործարար հարաբերությունը չի ներառում Ընկերության այն գործունեությունը, որի շրջանակներում Ընկերությունը սեփական կարիքների համար իրականացնում է Ընկերության համար օրենքով սահմանված ծառայությունների տրամադրումից տարբեր այլ գործունեություն.

7) **Ռիսկ՝** փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման վտանգավորության և դրա

հավանականության մասին վկայող հանգամանք, որը կարող է բնութագրվել ըստ երկրների կամ աշխարհագրական տեղակայման, հաճախորդների տեսակի, գործարքների կամ գործարար հարաբերությունների տեսակի, ծառայությունների տեսակի կամ լիազոր մարմնի կողմից սահմանված այլ չափանիշների,

8) **Ներդրումային ծառայություններ՝** «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածով սահմանված ծառայությունները,

9) **Ոչ հիմնական ծառայություններ՝** «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածով սահմանված ծառայությունները,

10) **Պայմանագիր՝** Ընկերության և Հաճախորդի միջև կնքված փաստաթուղթ, որի հիման վրա Հաճախորդին մատուցվում են ներդրումային և/կամ ոչ հիմնական ծառայություններ,

11) **Պրոֆեսիոնալ հաճախորդ՝** հաճախորդ, որն ունի համապատասխան փորձ և գիտելիք ինքնուրույն ներդրումային որոշումներ կայացնելու և դրանցից բխող ռիսկերը գնահատելու համար և համապատասխանում է Կանոնակարգ 4/07-ի 3.1 գլխով սահմանված չափանիշներին,

12) **Տեղեկատվության փոխանցման հուսալի միջոց՝** ցանկացած միջոց, որը Հաճախորդին հնարավորություն է տալիս ստանալ, պահպանել և հետագայում վերարտադրել իրեն ուղղված տեղեկատվությունը,

13) **Տեսանույնականացում՝** առանց Ընկերության աշխատակիցների հետ առերես շփման հաճախորդի հեռավար նույնականացման գործընթաց՝ տեսազանգի կամ Ընկերության տեխնիկական հարթակների միջոցով,

14) **Ծայրից ծայր գաղտնագրված հարթակ՝** տեղեկատվության անվտանգ փոխանցում ապահովող էլեկտրոնային հարթակ (այդ թվում՝ Zoom, Google Meet, Microsoft Teams կամ դրանց համարժեք այլ հարթակներ),

15) **«Բացել հաշիվը»** մոդուլ՝ Ընկերության վեբկայքում գործող համակարգ, որի միջոցով իրականացվում են հաշիվների բացման, պայմանագրերի կնքման, հաճախորդի նույնականացման գործողություններ,

16) **«Առևտրային հարթակ»** մոդուլ՝ Ընկերության վեբկայքում գործող համակարգ, որի միջոցով իրականացվում են պատվերների/հանձնարարականների ներկայացումը, հաղորդակցությունը, հաշվետվությունների և այլ տեղեկատվության տրամադրումը,

17) **Սակագներ՝** Ընկերության կողմից հաստատված ծառայությունների սակագները և/կամ Հաճախորդի հետ համաձայնեցված հատուկ սակագները,

18) **Ծառայություններ՝** Ընկերության կողմից մատուցվող ներդրումային և ոչ հիմնական ծառայությունները,

19) **Իրավասու աշխատակից՝** ներքին դիտարկումների մարմնի պատասխանատու աշխատակից

20) **Պատասխանատու աշխատակից՝** Ընկերության հաճախորդների սպասարկման բաժնի աշխատակիցը:

1.4 Եթե սույն Ընթացակարգով այլ բան նախատեսված չէ, ապա դրանում օգտագործվող հասկացություններն ունեն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով և Ընկերության ներքին իրավական ակտերով սահմանված նշանակությունը:

2. ՀԱՃԱԽՈՐԴԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՇՎԻ ԲԱՑՄԱՆ (ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՄԱՆ) ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՊԱՀԱՆՋՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿԸ

2.1. Հաճախորդը հաշիվների բացման (պայմանագրի կնքման) դիմումը, Ընկերութան կողմից մատուցվող ծառայությունների գծով պայմանագրերի կնքման համար անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը պետք է ներկայացնի սույն Ընթացակարգով և Ընկերության «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի ընթացակարգ»-ով սահմանված կարգով:

2.2. Հաճախորդի կողմից հաշվի բացման դիմումները կարող են ներկայացվել՝

1) Առձեռն՝ Հաճախորդի կողմից Ընկերության գրասենյակ ներկայանալով, ՓԼ/ԱՖ Ընթացակարգով պահանջվող փաստաթղթեր ներկայացնելով և անհրաժեշտ հարցաթերթիկները լրացնելով,
2) «Բացել հաշիվը մոդուլ»-ի միջոցով՝ ՓԼ/ԱՖ Ընթացակարգով պահանջվող փաստաթղթերը վերբեռնելով և անհրաժեշտ տեղեկատվությունը լրացնելով, կամ
3) Էլ. փոստի միջոցով՝ onboarding@apricotcapital.am էլ. հասցեին ՓԼ/ԱՖ Ընթացակարգով պահանջվող փաստաթղթերը ուղարկելով և անհրաժեշտ հարցաթերթիկները լրացնելով:

2.3. Ընկերության հետ Գործարար հարաբերություն հաստատելու դեպքում Հաճախորդի կողմից լրացվում է «Հաճախորդին ճանաչելու և նույնականացնելու վերաբերյալ հարցաթերթիկը՝ Համաձայն Հավելված 1-ի: Կախված Գործարար հարաբերության բնույթից՝ Ընկերության գործադիր մարմնի ղեկավարի որոշմամբ կարող է հաստատվել և կիրառվել նաև այլ հարցաթերթիկ:

2.4. Պատասխանատու աշխատակիցը հավաքագրում է Հաճախորդի կողմից ներկայացված և Ընկերության ներքին իրավական ակտերով պահանջվող փաստաթղթերը և լրացված հարցաթերթիկները, ընդունում հաշվի բացման (պայմանագրի կնքման) դիմումը և հանձնում Իրավասու աշխատակցի դիատարկմանը:

2.5. Անհրաժեշտության դեպքում Իրավասու աշխատակիցը կարող է պահանջել լրացուցիչ այլ փաստաթղթեր, տվյալներ կամ պարզաբանումներ, եթե դրանք անհրաժեշտ են Հաճախորդի նույնականացման, պատշաճ ուսումնասիրության, ռիսկի գնահատման կամ օրենսդրական պահանջների կատարման համար:

2.6. Ընկերությունն իրավունք ունի դադարեցնել Հաճախորդի կողմից ներկայացված հաշվի բացման հայտի դիտարկումը, եթե Հաճախորդը Ընկերության կողմից փաստաթուղթ և/ կամ տեղեկատվություն տրամադրելու պահանջ ներկայացնելուց հետո 1 (մեկ) ամսվա ընթացքում չի ներկայացրել համապատասխան փաստաթղթերը և/կամ տեղեկատվությունը: Նշված ժամկետից հետո Հաճախորդի կողմից տեղեկատվություն և/կամ փաստաթղթեր ներկայացնելու դեպքում Ընկերությունը կարող է վերսկսել Հաճախորդի պատշաճ ուսումասիրման և նույնականացման գործընթացը և կրկին պահանջել ներկայացնել անհրաժեշտ փաստատթղթեր և/կամ տեղեկատվությունը:

2.7. Բավարար տեղեկատվություն, պահանջված լրացուցիչ տեղեկատվություն կամ

Ընկերության կողմից անհրաժեշտ համարվող այլ փաստաթղթեր և/կամ տեղեկություններ չստանալու դեպքում, ինչպես նաև Ընկերության ներքին քաղաքականություններով, ընթացակարգերով, ռիսկերի գնահատման արդյունքներով, կիրառելի օրենսդրությամբ կամ այլ հիմնավոր պատճառներով պայմանավորված դեպքերում, Ընկերությունն իրավունք ունի մերժել Հաճախորդի հաշվի բացման դիմումը և/կամ գործարար հարաբերությունների հաստատումը: Ընկերությունը պարտավոր չէ Հաճախորդին հայտնել մերժման պատճառները, բացառությամբ այն դեպքերի, երբ նման պարտականություն ուղղակիորեն նախատեսված է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

2.8. Մինչև Հաճախորդի հետ համապատասխան ծառայության մատուցման պայմանագիր կնքելը, Հաճախորդին հնարավորություն է տրվում ծանոթանալու Ընկերության կայքում հրապարակված տվյալ ծառայության մատուցումը կարգավորող կանոնակարգերին, այլ ներքին իրավական ակտերին, փաստաթղթերին և Սակագներին: Համապատասխան ծառայության մատուցման պայմանագրում ներառվում է Հաճախորդի հայտարարությունն այն մասին, որ վերջինս ծանոթացել է նշված փաստաթղթերին և ընդունում է դրանց կիրառելիությունը:

2.9. Հաճախորդի նախաձեռնությամբ նախկինում փակված հաշվի վերաբացման դեպքում Ընկերությունը կարող է նախաձեռնել վերաբացման գործընթացը՝ իր հայեցողությամբ որոշելով անհրաժեշտ գործողությունների ծավալը և պահանջվող փաստաթղթերի ցանկը՝ ելնելով Հաճախորդի նախորդ նույնականացման, բիզնես հարաբերության պատմության և առկա ռիսկային գնահատման արդյունքներից:

2.10. Հաճախորդի նախաձեռնությամբ հաշվի վերաբացման դեպքում Ընկերությունը կարող է Հաճախորդից պահանջել տրամադրել գրավոր հավաստում այն մասին, որ ներկայացված տվյալները և փաստաթղթերը չեն փոփոխվել:

2.11. Եթե որևէ տվյալ, փաստաթուղթ կամ տեղեկատվություն փոփոխվել է, Հաճախորդը պարտավոր է լրացնել հարցաթերթիկի համապատասխան դաշտերը փոփոխված կամ լրացված տվյալներով, և ներկայացնել նոր կամ թարմացված փաստաթղթերը:

2.12. Ընկերությունը կարող է հիմք ընդունել Հաճախորդի հավաստումը տեղեկատվության չփոփոխման վերաբերյալ և դրա հիման վրա պատրաստել և Հաճախորդին տրամադրել ներդրումային ծառայությունների մատուցման պայմանագիրը: Եթե ստորագրողը նույն անձն է, ով առաջին անգամ հաշիվ բացելիս անցել է նույնականացում, Ընկերությունը կարող է չիրականացնել նոր նույնականացում, եթե չկան օբյեկտիվ հիմքեր տվյալների կամ ռիսկային պրոֆիլի վերագնահատման համար:Ընկերությունը կարող է նոր հաշվի բացումից հետո պահանջել, որ Հաճախորդը առավելագույնը 7 (յոթ) օրվա ընթացքում տրամադրի լրացուցիչ փաստաթղթեր կամ տեղեկատվություն, եթե առկա փաստաթղթերի վավերականության ժամկետը լրացել է, անհրաժեշտ է ստանալ նոր տեղեկատվություն Ընկերության պատշաճ ուսումնասիրությունն իրականացնելու կամ կիրառելի պահանջների կատարումն ապահովելու նպատակով, և եթե համապատասխան ռիսկը հնարավոր է արդյունավետ կառավարել, իսկ հաշվի անհապաղ բացումը անհրաժեշտ է Հաճախորդի բնականոն գործարար հարաբերությունները չխաթարելու նպատակով: Մինչև Հաճախորդի կողմից պահանջված փաստաթղթերի կամ տեղեկատվության ամբողջությամբ տրամադրումը, Ընկերությունը կարող է չկատարել Հաճախորդի հանձնարարականները և պատվերները:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՄԱՆ ԵՎ ԱՌԱՆՑ ԱՌԵՐԵՍ ՇՓՄԱՆ ԳՈՐԾԱՐԱՐ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՍՏԱՏԵԼԻՍ ՀԱՃԱԽՈՐԴԻ ՏԵՍԱՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ԿԱՐԳԸ

3.1. Հաճախորդի կողմից ներկայացված փաստաթղթերի և տեղեկատվության ուսումնասիրման արդյունքում վերջինիս վերաբերյալ Իրավասու աշխատակցի կողմից դրական եզրակացության առկայության դեպքում Պատասխանատու աշխատակիցը 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում կապ է հաստատում Հաճախորդի հետ և համաձայնեցնում պայմանագրի կնքման եղանակը:

3.2. Հաճախորդի հետ պայմանագրի կնքումը կարող է իրականացվել հետևյալ եղանակներից որևէ մեկով՝

1) Առերես,
2) առանց առերես շփման՝ տեսազանգի միջոցով, կամ անձը հաստատող փաստաթուղթը պարունակող ինքնանկար (selfie) ներկայացնելու միջոցով:
3) առանց առերես շփման՝ Ընկերության պաշտոնական կայքում «Բացել Հաշիվ» մոդուլի միջոցով:

3.3. Պայմանագրի առերես կնքման դեպքում Հաճախորդը ներկայանում է Ընկերության գրասենյակ, Պատասխանատու աշխատակցին ներկայացնում իր անձը հաստատող փաստաթուղթը, ծանոթանում պայմանագրին և Ընկերության համապատասխան ներքին իրավական ակտերին և Պատասխանատու աշխատակցի ներկայությամբ ստորագրում պայմանագիրը:

3.4. Առանց առերես շփման՝ անձը հաստատող փաստաթուղթը պարունակող ինքնանկարի միջոցով պայմանագիր կնքելիս, պայմանագրի կնքման համապատասխան եղանակը համաձայնեցնելուց հետո Պատասխանատու աշխատակիցը Հաճախորդին տրամադրում է համապատասխան հրահանգներ՝ Հաճախորդի նույնականացման նպատակով անձը հաստատող փաստաթուղթը պարունակող ինքնանկար ներկայացնելու վերաբերյալ, ինչպես նաև ստորագրման ենթակա ծառայության մատուցման պայմանագրի օրինակը:

Պայմանագրի կնքման և Հաճախորդի կողմից դրա ստորագրման հավաստիությունն ապահովելու նպատակով պայմանագրի օրինակը Հաճախորդին ուղարկվում է վերջինիս կողմից նախապես տրամադրված և հաստատված էլեկտրոնային փոստի հասցեին, իսկ Հաճախորդի կողմից ստորագրված պայմանագիրը պետք է Ընկերությանը վերադարձվի նույն էլեկտրոնային փոստի հասցեից: Հաճախորդը ներկայացնում է ՓԼ/ԱՖ Ընթացակարգով սահմանված՝ անձը հաստատող փաստաթղթի բնօրինակը պարունակող ինքնանկար, որում հստակ և միաժամանակ տեսանելի են Հաճախորդի դեմքը և անձը հաստատող փաստաթուղթը: Ինքնանկարը պետք է լինի բավարար որակի և հնարավորություն տա ընթեռնելիորեն տեսնելու անձը հաստատող փաստաթղթում առկա տվյալները, ինչպես նաև համեմատելու Հաճախորդի դեմքը անձը հաստատող փաստաթղթում առկա լուսանկարի հետ: Պատասխանատու աշխատակիցը ստուգում է ներկայացված ինքնանկարը, անձը հաստատող փաստաթուղթը և դրանց համապատասխանությունը Հաճախորդի կողմից նախկինում ներկայացված տվյալներին և փաստաթղթերին: Ինքնանկարի միջոցով նույնականացման արդյունքը կարող է գնահատվել դրական, եթե առնվազն՝

3.4.1. ինքնանկարում Հաճախորդի դեմքը և անձը հաստատող փաստաթուղթը հստակ և ամբողջությամբ տեսանելի են, իսկ պատկերի որակը բավարար է դրանց ուսումնասիրության համար.

3.4.2. ինքնանկարում պատկերված անձի արտաքին հատկանիշները ողջամտորեն համապատասխանում են անձը հաստատող փաստաթղթում առկա լուսանկարին.

3.4.3. անձը հաստատող փաստաթղթում առկա տվյալները հստակ ընթեռնելի են և համապատասխանում են Հաճախորդի կողմից նախկինում ներկայացված տվյալներին և փաստաթղթերին.

3.4.4. անձը հաստատող փաստաթուղթը ներկայացված տվյալների համաձայն վավեր է, և դրա գործողության ժամկետը լրացած չէ.

3.4.5. ինքնանկարում կամ անձը հաստատող փաստաթղթի պատկերում առկա չեն ակնհայտ փոփոխման, խմբագրման, կեղծման կամ այլ միջամտության նշաններ.

3.4.6. ներկայացված ինքնանկարի, անձը հաստատող փաստաթղթի և Հաճախորդի վերաբերյալ Ընկերությանն առկա այլ տվյալների միջև չկան այնպիսի անհամապատասխանություններ, որոնք կասկած են առաջացնում Հաճախորդի ինքնության կամ ներկայացված տեղեկատվության իսկության կամ արժանահավատության վերաբերյալ:

3.5. Եթե վերը նշված չափանիշներից որևէ մեկի պահպանումը հնարավոր չէ հաստատել և ներկայացված ինքնանկարի, անձը հաստատող փաստաթղթի, ստորագրության, օգտագործված կապի միջոցների կամ Հաճախորդի վերաբերյալ այլ տվյալների իսկության կամ արժանահավատության վերաբերյալ առկա է կասկած, ինչպես նաև եթե մինչև գործարքի իրականացումը Ընկերությունն անհրաժեշտ է համարում իրականացնել Հաճախորդի լրացուցիչ նույնականացում, Պատասխանատու աշխատակիցը կազմակերպում է Հաճախորդի Տեսանույնականացում՝ սույն Ընթացակարգով սահմանված կարգով: Մինչև Տեսանույնականացման հաջող ավարտը պայմանագրի կնքման գործընթացը չի ավարտվում, Հաճախորդին ծառայություններ չեն մատուցվում և նրա հանձնարարությամբ գործարքներ չեն իրականացվում:

3.6. Առանց առերես շփման՝ տեսազանգի միջոցով պայմանագիր կնքելիս Իրավասու աշխատակցի դրական պատասխանը ստանալուց հետո 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում Պատասխանատու աշխատակիցը Հաճախորդին է տրամադրում Ծայրից ծայր գաղտնագրված հարթակում նախատեսված տեսազանգի հրավեր՝ Հաճախորդի Տեսանույնականացման նպատակով: Տեսազանգի հրավերին կից Պատասխանատու աշխատակիցը Հաճախորդին տրամադրում է այն փաստաթղթերի ցանկը, որոնք Հաճախորդը պարտավոր է ներկայացնել Տեսանույնականացման ընթացքում, մասնավորապես՝ ՓԼ/ԱՖ Ընթացակարգով սահմանված անձը հաստատող փաստաթուղթ և Հաճախորդին էլեկտրոնային կապի միջոցներով ուղարկված ստորագրման ենթակա պայմանագրի նախագիծը:

3.7. Ընկերության կայքէջում առկա «Բացել Հաշիվ» մոդուլի միջոցով պայմանագիր կնքելիս ֆիզիկական անձ Հաճախորդի նույնականացումն իրականացվում է Ընկերության կողմից կիրառվող տեխնիկական լուծումների միջոցով, որոնք հնարավորություն են տալիս պատշաճ կերպով նույնականացնել հաճախորդին:

3.8. «Բացել Հաշիվ» մոդուլի միջոցով պայմանագիր կնքելիս իրավաբանական անձ հաճախորդը ներկայացնում է պահանջվող բոլոր փաստաթղթերը, իսկ նույնականացումն իրականացվում է իրավաբանական անձի անունից հանդես եկող լիազորված ներկայացուցչի նկատմամբ՝ Տեսազանգի միջոցով կամ 3.4 կետով սահմանված կարգով:

3.9. Հաճախորդի Տեսանույնականացումը կարող է իրականացվել միայն Ընկերության Պատասխանատու աշխատակիցների կողմից:

3.10. «Բացել հաշիվը» մոդուլի միջոցով համապատասխան տեխնիկական միջոցների օգտագործմամբ Տեսանույնականացման դեպքում Հաճախորդի նույնականացման վերաբերյալ վերջնական որոշումը կայացվում է Ընկերության Պատասխանատու աշխատակցի կողմից՝անհրաժեշտության դեպքում ներգրավելով Իրավասու աշխատակցին:

3.11. Պատասխանատու աշխատակիցները առնվազն պետք է ծանոթ լինեն Տեսանույնականացման միջոցով ստուգվող փաստաթղթերի առանձնահատկություններին, հաճախ հանդիպող կեղծարարության հնարավորություններին, ՓԼ/ԱՖ Ընթացակարգին, ՓԼ/ԱՖ քաղաքականությանը, Օրենքին, Կանոնակարգին, Կանոնակարգ 4/07-ի պահանջներին, ինչպես նաև սույն Ընթացակարգով սահմանված պահանջներին:

3.12. Տեսանույնականացման գործընթացի ընթացքում Պատասխանատու աշխատակիցները պետք է տեղակայվեն առանձնացված տարածքում, որը բացառի երրորդ անձանց հասանելիությունը Տեսանույնականացման գործընթացին:՝

3.13. Տեսանույնականացման սկզբում նույնականացման ենթակա անձը պետք է տա իր բացահայտ համաձայնությունը նույնականացման ողջ գործընթացին, դրա տեսանկարահանմանը և ձայնագրմանը, ինչպես նաև իր և անձը հաստատող փաստաթղթի նկարների կամ էկրանակադրերի (screenshots) ստացմանը: Այս համաձայնությունը պետք է հստակ արտահայտվի, տեսաձայնագրվի և պահպանվի Ընկերության Պատասխանատու աշխատակցի կողմից:

3.14. Տեսանույնականացումը պետք է իրականացվի իրական ժամանակում և առանց ընդհատումների: Աշխատողի և նույնականացման ենթակա անձի միջև տեսալսողական հաղորդակցության ամբողջականությունն ու գաղտնիությունը պետք է պատշաճ կերպով ապահովվի. այս պատճառով թույլատրվում են միայն Ծայրից ծայր գաղտնագրվող հարթակում կազմակերպված տեսազանգեր: Տեսապատկերի և ձայնի որակը պետք է հնարավորություն տա հստակ նույնականացնել Հաճախորդին, ինչպես նաև ստուգել ներկայացված անձը հաստատող փաստաթղթի տեսանելի պաշտպանական հատկանիշները, դրա ամբողջականությունը և հնարավոր վնասվածքները:

3.15. Պատասխանատու աշխատակիցը պետք է նաև համոզվի, որ անձի հաստատման նպատակով օտագործվող փաստաթուղթն ունենա այլ ձևական հատկանիշներ, որոնք սովորաբար բնութագրական են տվյալ տեսակի փաստաթղթի համար ներառյալ դասավորությունը, թվերի, նիշերի չափն ու դրանց միջև տարածությունը:

3.16. Պատասխանատու աշխատակիցը պետք է ստուգի փաստաթղթի անվնաս լինելու փաստը և համոզվի, որ այն չի ենթարկվել ձևախեղման:

3.17. Տեսանույնականացման ընթացքում Պատասխանատու աշխատակցի պահանջով Հաճախորդը պարտավոր է փաստաթուղթը շարժել տեսախցիկի առջև հորիզոնական կամ ուղղահայաց և կատարել ցանկացած լրացուցիչ շարժում՝ Պատասխանատու աշխատակցի հանձնարարությամբ:

3.18. Պատասխանատու աշխատակիցը Տեսանույնականացման ընթացքում կարող է Հաճախորդին տալ լրացուցիչ հարցեր, որոնք անհրաժեշտ են անձի ինքնությունը, փաստաթղթերի իսկությունը կամ ներկայացված տեղեկատվության հավաստիությունը ստուգելու նպատակով:

3.19. Անձը հաստատող փաստաթղթում պարունակվող տվյալների և տեղեկատվության վավերականության և հավաստիության ստուգումը պետք է իրականացվի որպես Տեսանույնականացման գործընթացի մաս: Այն ներառում է, օրինակ, ստուգում, թե արդյոք տրման ամսաթիվը և անձը հաստատող փաստաթղթի գործողության ժամկետը լրանալու

ամսաթիվը համապատասխանում են ներկայացրած փաստաթղթում նշված ժամկետներին: Կարող են նաև տրվել հարցեր, օրինակ, անձի ծննդյան թվի հետ կապված և այլն:

3.20. Եթե վերը նկարագրված տեսողական ստուգումը հնարավոր չէ, օրինակ՝ վատ լուսավորության պայմանների, պատկերի կամ ձայնի փոխանցման վատ որակի պատճառով, և/կամ եթե նույնականացման ենթակա անձի հետ բանավոր հաղորդակցությունը հնարավոր չէ, նույնականացման գործընթացը պետք է ընդհատվի: Նույնը վերաբերում է ցանկացած այլ անհամապատասխանության կամ անորոշության դեպքերին: Նման դեպքում Տեսանույնականացումը համարվում է չկայացած և կարող է իրականացվել կրկին:

3.21. Անձը հաստատող փաստաթղթում պարունակվող տվյալների վավերականությունն ու հավաստիությունը ստուգելուց հետո Պատասխանատու աշխատակիցը Հաճախորդին առաջարկում է Տեսանույնականացման ընթացքում ստորագրել Պայմանագիրը, իսկ իրավաբանական անձի դեպքում՝ նաև կնքել այն (կնիքի առկայության դեպքում), և ցուցադրել ստորագրված (և, անհրաժեշտության դեպքում, կնքված) Պայմանագիրը տեսախցիկի առջև: Պատասխանատու աշխատակցի պահանջով Հաճախորդը պարտավոր է փաստաթուղթը շարժել տեսախցիկի առջև՝ դրա ամբողջականությունն ու ստորագրության տեսանելիությունն ապահովելու նպատակով, ինչպես նաև կատարել նույնականացման համար անհրաժեշտ այլ գործողություններ: Տեսազանգի ավարտից անմիջապես հետո Հաճախորդը պարտավոր է ստորագրված Պայմանագրի ամբողջական պատճենը (լուսապատճեն կամ լուսանկար) ուղարկել Պայմանագրում նշված՝ Հաճախորդի հասանելի էլեկտրոնային փոստի հասցեներից որևէ մեկից՝ Ընկերության՝ Պայմանագրում նշված էլեկտրոնային փոստի հասցեին:

3.22. Իրավաբանական անձ հաճախորդի դեպքում վերջինիս նույնականացնելիս սույն գլխով սահմանված պայմանները և կարգը կիրառվում է Հաճախորդի լիազոր ներկայացուցչի նկատմամբ:

3.23. Հաճախորդի նույնականացման՝ Ընթացակարգին համապատասխան տեսաձայնագրությունների և ինքնանկարների ապահովման նկատմամբ հսկողությունն իրականացնում է Իրավասու աշխատակիցը:

3.24. Իրավասու աշխատակիցը՝

1) Ստուգում է Տեսանույնականացման ընթացքի տեսաձայնագրությունների, սահմանված կարգով ստուգիչ գործողությունների կատարման, ինչպես նաև ինքնանկրի համապատասխանությունը սույն Ընթացակարգի և Կանոնակարգի պահանջներին,
2) Անհամապատասխանությունների և/կամ Ընթացակարգի պահանջների խախտումների հայտնաբերման դեպքում Իրավասու աշխատակիցն իրավունք ունի մերժել Տեսանույնականացման արդյունքները, պահանջել կրկնակի նույնականացում կամ մերժել Գործարար հարաբերությունների հաստատումը:

3.25. Հաճախորդի և Ընկերության միջև պայմանագրերը կարող են կնքվել հետևյալ եղանակներով՝

ա) գրավոր՝ կողմերի կամ նրանց պատշաճ լիազորված ներկայացուցիչների կողմից մեկ փաստաթուղթ ստորագրելու միջոցով.

բ) կողմերի կամ նրանց պատշաճ լիազորված ներկայացուցիչների կողմից ստորագրված պայմանագրի սկանավորված օրինակները էլեկտրոնային փոստի միջոցով փոխանակելու եղանակով: Այս դեպքում պայմանագիրը համարվում է կնքված կողմերից յուրաքանչյուրի կողմից մյուս կողմի ստորագրած պայմանագրի սկանավորված օրինակն ստանալու պահից: Պայմանագրի փոխանակումն իրականացվում է կողմերի կողմից նշված կամ համաձայնեցված էլեկտրոնային փոստի հասցեներով.

գ) էլեկտրոնային եղանակով՝ Ընկերության էլեկտրոնային հարթակի (ինտերնետային կայքի, բջջային հավելվածի կամ համանման այլ համակարգի) միջոցով՝ Հաճախորդի կողմից պայմանագրի պայմաններին համաձայնություն հայտնելու և պայմանագրի կնքմանն ուղղված հստակ գործողություն կատարելու եղանակով, պայմանով, որ հնարավոր է նույնականացնել Հաճախորդին և արձանագրել նրա կողմից արտահայտված համաձայնությունը:

3.26. Սույն կետով նախատեսված եղանակներով կնքված պայմանագրերն ունեն հավասար իրավաբանական ուժ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջների պահպանման պայմանով:

3.27. Հաճախորդի կողմից ստորագրված պայմանագրի ստացումից հետո (կարող է լինել ստորագրված բնօրինակը կամ էլեկտրոնային տարբերակը, ընդ որում, էլ. փոստով տրամադրելու դեպքում Հաճախորդը պարտավոր է լուսապատճենել/լուսանկարել ամբողջական պայմանագիրը և ուղարկել պայմանագրում նշված հասանելի էլեկտրոնային փոստի հասցեներից պայմանագրում նշված Ընկերության էլեկտրոնային փոստի հասցեին) Ընկերությունը նույնպես ստորագրում է այն, որից հետո բացվում է հաճախորդի բրոքերային հաշիվը, որի մասին հավաստումը վերջինս ստանում է իր էլ. փոստի հասցեին կամ գրասենյակում՝ հաշվի բացման հաստատման փաստաթուղթը վերցնելիս:

4. ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ

4.1. Նախքան ներդրումային ծառայությունների մատուցումը և ծառայությունների մատուցման Պայմանագրի կնքումը Ընկերությունը դասակարգում է Հաճախորդներին՝ որպես պրոֆեսիոնալ և ոչ պրոֆեսիոնալ՝ ներդրումային ծառայություններից որևէ մեկի կամ բոլոր ծառայությունների մասով, կամ որևէ գործարքի կամ արժեթղթի որևէ տեսակով (դասով) գործարքների մասով:

4.2. Ընկերության կողմից Կանոնակարգ 4/07-ով սահմանված չափանիշներով Հաճախորդի նախաձեռնությամբ վերջինիս պրոֆեսիոնալ դասակարգումը վավեր համարվելու նպատակով Ընկերությունը իրականացնում է Հաճախորդի գիտելիքների և փորձի վերաբերյալ գնահատում: Հաճախորդի գիտելիքների և փորձի վերաբերյալ վերջինիս գնահատումը պետք է հավաստիացնի, որ Հաճախորդը ներդրումային ծառայություններից օգտվելու, ներդրումային որոշում կայացնելու և դրանց հետ կապված ռիսկերն ընկալելու համապատասխան ունակություն և գիտելիք ունի: Կազմակերպությունների դեպքում գիտելիքի և փորձի վերաբերյալ գնահատումն իրականացվում է կազմակերպության այն ղեկավարի, աշխատակցի կամ անձի նկատմամբ, որն իրավասու է կազմակերպության անունից գործարքներ կնքել:

4.3. Հաճախորդների դասակարգման նպատակով վերջիններիս գիտելիքի և փորձի գնահատումը իրականացվում է հետևյալ ընթացակարգով.

4.3.1. Հաճախորդը լրացնում է «Ճանաչիր քո հաճախորդին» հարցաթերթիկը՝ համաձայն սույն Ընթացակարգի ՀԱՎԵԼՎԱԾ 1-ի:

4.3.2. Հաճախորդին պրոֆեսիոնալ դասակարգելուց առաջ «Ճանաչիր քո հաճախորդին» հարցաթերթիկի «Գիտելիքների և փորձի գնահատման թեստ» բաժնի արդյուքների հիման վրա կազմվում է Ընկերության Հաճախորդների սպասարկման բաժնի կողմից ստորագրված արձանագրություն՝ համաձայն ՀԱՎԵԼՎԱԾ 2-ի: Նշված արձանագրությունը կազմվում է միայն Պրոֆեսիոնալ հաճախորդ դառնալու համար

դիմած ֆիզիկական/իրավաբանական անձանց համար: Հարցաթերթիկում պարունակվող յուրաքանչյուր հարց ունի պատասխանի մի քանի տարբերակ՝ գնահատման զրոյից հինգ միավորներով: Հարցաթերթիկի լրացման արդյունքներով 70% և ավելի միավոր հավաքելու դեպքում Հաճախորդը դասակարգվում է որպես պրոֆեսիոնալ, հակառակ դեպքում՝ որպես ոչ պրոֆեսիոնալ:

4.4. Նախքան Հաճախորդի հետ պայմանագրի կնքումը Ընկերությունը Հաճախորդին տրամադրում է «ՀԱՃԱԽՈՐԴԻ (ՊՐՈՖԵՍԻՈՆԱԼ ԿԱՄ ՈՉ ՊՐՈՖԵՍԻՈՆԱԼ) ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ» փաստաթուղթը համաձայն ՀԱՎԵԼՎԱԾ 3-ի:

4.5. Նախքան Հաճախորդի կողմից Պրոֆեսիոնալ հաճախորդ դասակարգվելը Հաճախորդը գրավոր հաստատում է, որ տեղեկացված է այդ մասին, որ Պրոֆեսիոնալ դասակարգվելու դեպքում զրկվում է օրենսդրական որոշակի պաշտպանվածությունից, որը գործում է ոչ պրոֆեսիոնալ հաճախորդների դեպքում:

4.6. Նախքան Պրոֆեսիոնալ հաճախորդների հետ լեվերիջով գործարքների, այդ թվում՝ ֆորեքս գործարքների հետ կապված ծառայությունների մատուցման պայմանագիր կնքելը կամ Հաճախորդին լեվերիջով գործարքների, այդ թվում՝ ֆորեքս գործարքների մասով Պրոֆեսիոնալ հաճախորդ դասակարգելը Ընկերությունը Հաճախորդին ծանուցում է տվյալ գործարքներին առնչվող ռիսկերի մասին: Տվյալ դեպքում Հաճախորդները գրավոր հայտարարություն են ներկայացնում Ընկերությանն այն մասին, որ տեղյակ են լեվերիջով գործարքներին, այդ թվում՝ ֆորեքս գործարքներին առնչվող ռիսկերի մասին, ընդ որում՝ այս հայտարարությունն անհրաժեշտ է ներկայացնել համաձայն ՀԱՎԵԼՎԱԾ 7-ի:

4.7. Հաճախորդի համաձայնության դեպքում՝ Ընկերության նախաձեռնությամբ կամ Պրոֆեսիոնալ հաճախորդի նախաձեռնությամբ Ընկերությանը թույլատրվում է Պրոֆեսիոնալ հաճախորդին վերաբերվել որպես ոչ պրոֆեսիոնալ և տվյալ Հաճախորդի նկատմամբ կիրառել ոչ պրոֆեսիոնալ հաճախորդների պաշտպանությանն ուղղված օրենսդրական պահանջները:

4.8. Եթե պրոֆեսիոնալ համարվող հաճախորդը կարծում է, որ ի վիճակի չէ գնահատել և կառավարել ներդրումային ծառայություններից կամ ներդրումներից բխող ռիսկերը, Պրոֆեսիոնալ հաճախորդի պարտավորությունն է դիմել Ընկերությանը՝ իրեն որպես ոչ պրոֆեսիոնալ հաճախորդ վերաբերվելու համար, ինչը հնարավորություն կտա օգտվել ոչ պրոֆեսիոնալ հաճախորդների պաշտպանությանն ուղղված օրենսդրական պահանջներից:

4.9. Պրոֆեսիոնալ հաճախորդ համարվող անձը սույն Ընթացակարգի 4.7-4.8 կետերի համաձայն Ընկերության կողմից դասակարգվում է ոչ պրոֆեսիոնալ Ընկերության հետ կնքված Պայմանագրի հիման վրա: Պայմանագրում հստակ ամրագրվում է, թե արդյոք Հաճախորդի ոչ պրոֆեսիոնալ դասակարգումը վերաբերում է ներդրումային ծառայություններից որևէ մեկին, բոլոր ծառայություններին, որևէ գործարքին, թե արժեթղթի որևէ տեսակով (դասով) գործարքներին:

4.10. Կանոնակարգ 4/07-ի պահանջներին համապատասխան Հաճախորդներին պրոֆեսիոնալ դասակարգելիս գրավոր հարցում են կատարում վերջիններիս նաև որակավորված ներդրող համարվելու համաձայնության վերաբերյալ: Հաճախորդի համաձայնության դեպքում որակավորված ներդրող գրանցվելու, գրանցումից դուրս գալու, ինչպես նաև ՀՀ ԿԲ ներկայացվող պրոֆեսիոնալ կարգավիճակի դադարեցման, Պայմանագրի լուծման և այլ տեղեկատվության փոփոխությունների վերաբերյալ հետագա գործընթացը իրականացվում է Կանոնակարգ 4/07-ի և «Որակավորված ներդրողներ համարելու

չափանիշները և անձանց՝ որպես որակավորված ներդրողներ գրանցման կարգը» կանոնակարգ 4/06-ի դրույթներին համապատասխան:

4.11. Պրոֆեսիոնալ հաճախորդները պարտավոր են Ընկերությանը տեղեկացնել այն փոփոխությունների մասին, որոնք կարող են ազդել իրենց պրոֆեսիոնալ դասակարգման վրա: Եթե Հաճախորդի կողմից տրամադրված կամ այլ կերպ Ընկերությանը հասանելի դարձած տեղեկատվության հիման վրա Ընկերության գնահատականով Հաճախորդն այլևս չի բավարարում այն պայմաններին, որոնց հիման վրա դասակարգվել է Պրոֆեսիոնալ հաճախորդ, կամ եթե Ընկերությունը պարզում է, որ Հաճախորդի կողմից տրամադրված տեղեկությունները եղել են անարժանահավատ, Ընկերությունը անհապաղ դադարեցնում է Հաճախորդի պրոֆեսիոնալ դասակարգումը, որի մասին 1 (մեկ) աշխատանքային օրվա ընթացքում տեղեկացնում է Հաճախորդին:

4.12. Եթե Ընկերությունը համաձայն հավելված 1-ի Հաճախորդի գիտելիքների և փորձի վերաբերյալ տրամադրված տեղեկատվության հիման վրա գտնում է, որ իր կողմից մատուցվող տվյալ ներդրումային ծառայությունը կամ ֆինանսական գործիքը չի համապատասխանում Հաճախորդի պահանջներին, ապա զգուշացնում է Հաճախորդին այդ մասին: Այդ զգուշացումը ներկայացվում է Հաճախորդին համաձայն ՀԱՎԵԼՎԱԾ 4-ի:

4.13. Ընկերության կողմից արժեթղթերի փաթեթի կառավարման կամ արժեթղթերում ներդրումների հետ կապված խորհրդատվության տրամադրման դեպքում Հաճախորդից տեղեկություններ պահանջելու չափանիշները կարգավորվում են տվյալ ծառայությունների մատուցումը կարգավորող Ընկերության կանոնակարգերին և Կանոնակարգ 4/07-ին համապատասխան:

4.14. Այն դեպքում, երբ Հաճախորդը չի տրամադրում իր գիտելիքների և փորձի վերաբերյալ պահանջվող տեղեկատվությունը կամ տրամադրում է ոչ բավարար տեղեկատվություն, ապա Ընկերությունը զգուշացնում է Հաճախորդին այն մասին, որ Հաճախորդի նման վարքագիծը թույլ չի տալիս գնահատել, թե արդյոք Ընկերության կողմից մատուցվող տվյալ ներդրումային ծառայությունը կամ ֆինանսական գործիքը համապատասխանում է Հաճախորդի պահանջներին: Այդ զգուշացումը Հաճախորդին ներկայացվում է համաձայն ՀԱՎԵԼՎԱԾ 5:

4.15. Այն դեպքում, երբ Հաճախորդը չի տրամադրում սույն Կանոնակարգի 4.13 կետով պահանջվող տեղեկատվությունը կամ տրամադրում է ոչ բավարար տեղեկատվություն, ապա Ընկերությունը զգուշացնում է Հաճախորդին այն մասին, որ Հաճախորդի նման վարքագիծը թույլ չի տալիս գնահատել կամ խորհուրդ տալ այնպիսի ներդրումային ծառայություններ և արժեթղթեր, որոնք առավելագույնս համապատասխանում են Հաճախորդի ցանկությանը: Այդ զգուշացումը Հաճախորդին ներկայացվում է համաձայն ՀԱՎԵԼՎԱԾ 6:

4.16. Սույն Ընթացակարգի 4.12. և 4.13 կետերում նշված տեղեկությունները ստանալուց հետո Ընկերությունը որոշում է, թե արդյոք Հաճախորդն ունի ներդրումային գործունեության բնագավառում անհրաժեշտ գիտելիքներ և փորձ, որպեսզի հասկանա տվյալ ներդրումային ծառայությունից կամ արժեթղթից բխող ռիսկերը: Ընկերությունը համարում է, որ Պրոֆեսիոնալ հաճախորդը ունի այդ անհրաժեշտ գիտելիքները և փորձը:

4.17. Ընկերությունն իրավունք ունի հիմնվել Հաճախորդի կողմից տրամադրված տեղեկատվության վրա, եթե չունի հիմնավոր պատճառ կասկածելու դրա ճշգրտությանը, ամբողջականությանը կամ արդիականությանը: Եթե Ընկերության տրամադրության տակ առկա են հակասական կամ կասկած հարուցող տվյալներ, այն իրավունք ունի պահանջել

լրացուցիչ փաստաթղթեր կամ տեղեկություններ և մինչև դրանց ստացումը ձեռնպահ մնալ համապատասխան ծառայության մատուցումից:

5. ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՆԱԿՈՒՄԸ ԵՎ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒՄԸ

5.1. Պայմանագրի և Ծառայությունների մատուցման շրջանակներում Կողմերի միջև ցանկացած տեղեկատվության, այդ թվում՝ հանձնարարականների, հաղորդագրությունների, ծանուցումների, փաստաթղթերի, հաշվետվությունների, քաղվածքների և այլ տեղեկությունների (այսուհետ՝ Ծանուցում) տրամադրումը, ստացումը և փոխանակումը կատարվում է էլեկտրոնային եղանակով՝ Հաճախորդի կողմից Ընկերությանը տրամադրված էլեկտրոնային փոստի հասցեի, «ԷՓՐԻՔՈՌ ԿԱՊԻՏԱԼ» ՓԲԸ-ի «Իմ հաշիվը» մոդուլի կամ Ընկերության կողմից կիրառվող այլ անվտանգ էլեկտրոնային հաղորդակցման միջոցների միջոցով՝ կողմերի միջև համաձայնեցված լեզվով, եթե Պայմանագրով, կիրառելի օրենսդրությամբ կամ Ընկերության ներքին իրավական ակտերով այլ բան նախատեսված չէ: Օրենսդրությամբ կամ Պայմանագրով նախատեսված դեպքերում Ընկերությունը կարող է տեղեկատվությունը տրամադրել նաև իր պաշտոնական կայքում հրապարակելու միջոցով:

5.2. Հաճախորդը համարվում է պատշաճ ծանուցված, եթե Ծանուցումն ուղարկվել է Հաճախորդի կողմից տրամադրված էլեկտրոնային փոստի հասցեին և առկա է դրա ուղարկման մասին էլեկտրոնային հավաստում, նույնիսկ եթե բացակայում է հաղորդագրության ընթերցման կամ բացման մասին հավաստումը, բացառությամբ այն դեպքերի, երբ Ընկերությանը հայտնի է դարձել կամ ողջամտորեն կարող էր հայտնի դառնալ, որ հաղորդագրությունը տեխնիկական պատճառներով չի առաքվել: Եթե Ծանուցումն ուղարկվել է «Առևտրային հարթակ» մոդուլի միջոցով, Հաճախորդը համարվում է պատշաճ ծանուցված այն ուղարկելու/մոդուլում տեղադրելու հաջորդ օրվանից, իսկ Ընկերության պաշտոնական կայքում հրապարակվելու դեպքում՝ հրապարակմանը հաջորդող օրվանից: Ծանուցումներն ուղարկվում են Ընկերության՝ onboarding@apricotcapital.am, brokerage@apricotcapital.am, info@apricotcapital.am կամ Ընկերության կողմից կիրառվող այլ պաշտոնական էլեկտրոնային հաղորդակցման միջոցներով:

